ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
("ՀՀՌՑ" ՓԲԸ)

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF HIGH - TECH INDUSTRY
"TELEVISION AND RADIO BROADCASTING NETWORK OF ARMENIA"
CLOSED JOINT-STOCK COMPANY
("TRBNA" CJSC)

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՑԱՆՑ
DIGITAL BROADCASTING PUBLIC NETWORK OF RA

N 27-268
16 հունիս 2026թ.

«ԱՄԷԼԻ» ՍՊԸ տնօրեն Ա. Դավթյանին
(ՀՀ, ք. Երևան, Ավան, Ավան 4 փ., 1 նրբ., տ. 39
Հեռ.՝ (374 99) 91 72 74
էլ. փոստ՝ ameli-88888@gmail.com)

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագիրը միակողմանի ամբողջական լուծելու մասին)

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության (**այսուհետ՝ Պատվիրատու**) և «ԱՄԷԼԻ» ՍՊ ընկերության (**այսուհետ՝ Կատարող**) միջև 02 ապրիլի 2026 թվականին կնքված թիվ ՀՀՌՑ-ԳՀԽԾՁԲ-26/14 պայմանագրի (**այսուհետ՝ Պայմանագիր**) 1.1 կետի համաձայն՝ Կատարողը ստանձնում է **Կենտրոնի (Ապարան, Աշտարակ, Գեղաձոր, Վեդի), Վայոց Ձորի (Զովաշեն, Եղեգնաձոր-1, Վայք, Ջերմուկ, Թերփ), Գեղարքունիքի (Սևանի լեռնանցք, Ճամբարակ, Գավառ, Վարդենիս, Մարտունի, Հրազդան, Անտառամեջ, Սևան, Ծաղկաձոր), Կապան/Գորիս (Կապան-1, Կապան-2, Եղվարդ, Ծավ, Շիկահող, Քաջարան, Վարդանիձոր, Մեղրի, Ագարակ, Անտառաշատ, Տանձավեր, Գորիս, Խնածախ, Կատարի) և Սիսիանի (Սիսիան, Դարբաս, Գորայք) տարածքային բաժինների հեռուստակայանների ենթակառուցվածքների վերակառուցման և վերազինման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների մատուցման** (**այսուհետ՝ Ծառայություն**) պարտավորությունը՝ N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (**այսուհետ Հավելված 1**) պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրով Պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Ծառայության կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետները և պայմանագրի կատարման արդյունքը Պատվիրատուին չի ներկայացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի Հավելված 1-ի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված Ծառայությունը սկսվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետ է սահմանվել 45 /քառասունհինգ/ օրացուցային օրը ներառյալ:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրով սահմանված վերջնաժամկետից հետո Ծառայությունը չի մատուցվել և պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուին չի ներկայացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Պատվիրատուն, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «ԱՄԷԼԻ» ՍՊ ընկերության հետ կնքված Պայմանագրից, համարելով այն ամբողջությամբ լուծված:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա **/այսուհետ՝ Որոշում/** լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Կատարողը պայմանագրի ապահովման գումարները /կցվում են/ Պատվիրատուի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի թիվ 1570027609970100 հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու դեպքում՝ Պատվիրատուն չի ներկայացնի լիազոր մարմնին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին Որոշումը:

Ապահովման գումարի փոխանցումը կատարվում է լիազոր մարմնին Որոշումը ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, սակայն ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը:

Ապահովման գումարի փոխանցումից հետո Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազոր մարմնին, որի հիման վրա մասնակիցը կամ պայմանագիր կնքած անձը չի ներառվում իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Հակառակ դեպքում՝ մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրենի
պարտականությունները կատարող Է. Ջաղացպանյան

Կատարող՝ Մարինա Նիկոլյան
Գնումների բաժնի ղեկավար
Հեռ.՝ 010 65 40 73
Էլ. փոստ՝ marina.nikolyan@tna.am